և նորա կեանքի տեղութիւնը. հօր մահը տեսանք, սօտաւորապէս, 1268 թուին. Վախտանգը պիտի ծնուած լինի այդ թուականից առաջ, բայց ոչ շատ առաջ. նորա աւետարանը գրուած է 1279 թուին «ի խրատ եւ ի վարժուն մանկական տիոց իւրոց». առաքելական թղթերն էլ հաւանօրէն 1280 թուականին, որին ապացոյց նորա պատանեկան մանրանկարը, մօտաւորապէս 15 տարեկան։ Զորս տարի յետոյ եւս Երզնկացին նորան անուանում է «զբարթամիտ» պատանի, ուրեմն եւ ոչ մեծ քան 18–9 տարեկան մեր հաշուով։ Այս տուեալներով նորա ծնունդը պիտի նշանակել 1265–1268 թ. թ., որով և մեռած պիտի համարել 76–80 տարեկան հասակում։

Գ.

Ումեկեան տոհմը, այսպէս անուանենք Վախտանգի հօր անունով, որ ամենից յայտնի ներկայացուցիչն էր, արեւելեան Հայաստանի բնիկ իշխաններից չէր, այլ եկուոր Մանազկերտի շրջանից. այս մասին մեզ մանրամասնութիւններ են տալիս Վարդան և Դանձակեցին։ Առաջինը յայտնում է 1242 թուականի համար. «ի վեցհարիւր ինոսուն և մի թուին Հայոց Բաչու Նուինն փոխեաց զիշխանութիւն Զարմաղանին և էառ զկարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երեւելի, մեծատուն եւ երկիւղած ի Տեառնէ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփաննոս եւ զեղբարսն իւր հինգ»(*)։ Ուրիշ աղբիւրից էլ գիտենք, որ Թաթարների արշաւանքը դէպի Կարին եւ Փոքր Ասիայի քաղաքները՝ Կեսարիա և այլն սկսուած էր 1242 թուին. Գրիգոր Դոփեան, որ միւս հայ իշխանների հետ՝ Աւագի գլխաւորութեամբ՝ մասնակից էր այդ արշաւանքին, պատմում է անձամբ մի յիշատակարանի մէջ(**)։

Իսկ Դանձակեցին առանց թուականը յիշելու Ումեկի հիւսիսային Հայաստան փոխադրուիլն ու Տփխիսում հաստատուիլը կապում է Թաթարական հարկապահանջութեան պատմութեան հետ, որ կատարուել է Մանգու Խանի հրամանով «յեօթն հարիւր եւ երեք թուականին Հայոց» (= 1254). թուելով հարկապահանջութեան ծանրը կողմերը զանազան դասերից, աւելացընում է. «նաև ի վաճառականաց բազում ինչս չահեալ, կուտեցին զանձս սաստիկս ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց. և այսպէս զամենեսեան սղացուցեալ, եւ վայիւ եւ աշխարով լցեալ զաշխարհս Թոզին չար ոստիկանս ի վերայ աշխարհացս զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով եւ գրով։ Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի Թաթարոյն հանդերձ որդւովքն՝ Յովհաննաւ եւ Ստեփաննոսիւ, եւ եղբարբք իւրովք. եւ էր յայնժամ ի Տփխիս քաղաքի բնակութիւն կալեալ, եւ հայր անուանեալ Թագաւորին Վրաց Դաւթի, եւ մեծարեալ ի զանէն գրով, եւ յամենայն աւագանւոյն։ Սա առատ տուր ետ Արղունին, և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց։ Բայց յեկեղեցականաց ոչինչ առին հարկս, զի չունէին հրաման ի զանէն։ Նոյնպէս եւ որդիքն Սարաւանին՝ Շնորհաւերն և Մկրտիչն ընչաւէտք և մեծատունք»(*)։

Ումեկը հաստատուելով Տփխիսում, ինչպէս երևում է Դանձակեցու այս տեղեկութիւններից, վաճառականական մեծ գործունէութիւն ունէր Թաթարական պետութեան սահմաններում. եթէ խանը գրով մեծարել էր նորան, Վրաց Դաւիթ թագաւորի կողմից «հայր» կոչուել եւ Արղունի նման «չար» ոստիկանից «յոյժ մեծարանք» վայելել, ապացոյց է, թէ Ումեկի դիրքն ազդեցութիւնը շատ բարձր էր իւր հարստութեան, հաւանօրէն եւ խելքի ու ճարպիկութեան շնորհիւ։

Նորա շինարարական գործունէութեան մասին աւելի բան չգիտենք, քան ինչ Երզնկացին է հաղորդում իւր Նախադրութեան մէջ, բայց ձեռք է բերում հիւսիսային Հայաստանի նշանաւոր վանքերից

(*) Էմինի հրատ. Մոսկվա. 1861 երես 193։

(**) Օրթաբիլիսայի (Լենինականի մօտ) աւետարանի պահպանակ մեր Զեռագիրների ցիշատակարանների ժողովածու, անտիպ։

(*) Դանձակեցի. Ղուկ. հրատ. Թիֆլիս, եր. 349։